

## ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄՆԵՐԻ ԹԻՖԼԻՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԾՐԱԳԻՐԸ

### Ա. Ռ. ԶԱՐԱՅԱՆ

1912 թվականի աշնանը, երբ սկսվեց Բալկանյան պատերազմը, արևմտահայերի վիճակը կրկին հայ հասարակության զանազան խավերի անհանգստության և բուռն քննարկման առարկա դարձավ: Հայ մտավորականության ամենակտիվ մասը սկսեց համախմբել իր ուժերը, որպեսզի մի կողմից կանխի Թուրքահայաստանում հնարավոր ջարդերը, մյուս կողմից օգտագործի Ռուսաստանի կառավարության բարեհաճությունը ի նպաստ Թուրքահայաստանի խնդրի լուծման:

1912 թվականի հոկտեմբերի վերջերին Թիֆլիսում հրավիրվեց հայաբնակ շրջանների ներկայացուցիչների ժողով<sup>1</sup>, որն ընտրեց ժամանակավոր բյուրո: Սարգիս Հարությունյանի նախագահությամբ: Բյուրոյի կազմում ընդգրկվեցին Ա. Խատիսյանը, Ա. Բալանթարը, Հ. Առաքելյանը, Ա. Պողոսյանը, Հովհ. Թումանյանը և Ն. Աղբալյանը:

1912 թ. նոյեմբերի 10-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղղված նամակում<sup>2</sup> Բյուրոյի նախագահ Ա. Հարությունյանը գրում է, որ ժողովը պատգամ է տալիս ժամանակավոր բյուրոյին «հրավիրել մի համագումար, ազգային ժողով, իսկ մինչ այդ ազգային ժողովի գումարումը վարել ռուսահայոց օժանդակության գործը»<sup>3</sup>:

Նույն թվականի նոյեմբերի 25-ին Թիֆլիսում կայացավ համագումար ժողովը, որին ներկա էին պատվիրակներ Թիֆլիսից, Հին Նախիջևանից, Շուշիից և այլ հայաշատ վայրերից<sup>4</sup>:

Համագումարի քննության առարկան երկու հարց էր. առաջինը՝ դիվանագիտական ճանապարհով կրկին արևմտահայերի հարցի բարձրացում Ռուսաստանի և Եվրոպական երկրների առջև, երկրորդը՝ արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպում:

Քննության առնելով այս հարցերը՝ համագումարը հանձնարարեց Բյուրոյին օժանդակել Նորին վեհափառությանը հայկական հարցի վերարժարմանը իր դիվանագիտական ձեռնարկումների մեջ և քարոզչական աշխատանքներ տանել արտերկրում հայկական հարցի շուրջ դրական տրամադրվածություն ստեղծելու համար<sup>5</sup>, նաև կապեր հաստատել Կ. Պոլսի, Փարիզի և հայաշատ այլ վայրերի հայկական կազմակերպությունների հետ, որոնք նպատակ ունեն աջակցելու հայկական հարցի լուծմանը<sup>6</sup>:

Համագումարից հետո Թիֆլիսի Ազգային Բյուրոն կաթողիկոսի գործում աջակցությամբ աշխատանքներ է ձեռնարկում Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու ծրագրերի շուրջ:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ 57 ց. 2, գ. 676, ք.8 :

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս Լեռ, Անցյալից, հատոր Բ, էջ 85, 1999:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>6</sup> 1912 թ. նոյեմբերի 10-ին Գևորգ Ե կաթողիկոսը կոնդակով իր լիազոր ներկայացուցիչ է նշանակում եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար Փաշային, որը անմիջապես ուղևորվում է Փարիզ՝ նպատակ ունենալով հնարավոր բոլոր միջոցներով քարոզչություն տանելու Եվրոպայում հայկական բարենորոգումների իրականացման նպատակով նպաստավոր կարծիք ձևավորելու համար:

1912 թ. դեկտեմբերին Ամենայն հայոց կաթողիկոսը հայ ժողովրդի անունից դիմում է ռուսաց կայսրին խնդրանքով՝ «թուրքերի ձեռքով հարստահարվող հայերին պաշտպանելու և նրանց ընդունելու Ռուսաստանի հովանավորության տակ»<sup>7</sup>:

Գևորգ կաթողիկոսի հրամանով ստեղծվում է նաև պատվիրակություն (Մեսրոպ Եպիսկոպոս, Բագրատ վարդապետ, Ալեքսանդր Խատիսյան և Սարգիս Հարությունյան), որը պետք է հանդիպեր Կովկասի ռուսաց փոխարքայի հետ՝ փոխանցելու նրան ռուսաց կայսրին ուղղված կաթողիկոսի հուշագիրը և քննության առնելու տաճկահայերի վիճակը<sup>8</sup>: Հայ պատվիրակների հանդիպման մանրամասները տրված են պատգամավորության ներկայացուցիչների՝ Գևորգ Ե կաթողիկոսին ուղղված նամակում<sup>9</sup>:

Հանդիպման ժամանակ փոխարքայի և հայկական պատվիրակության միջև տեղի է ունենում մտքերի փոխանակություն, որտեղ փոխարքան նշում է, որ Ռուսաստանը չի կարող այժմ մտնել Տաճկաստան, քանի որ պայմանները նպաստավոր չեն<sup>10</sup>, միաժամանակ վստահեցնելով, որ տաճկահայերի վիճակի բարենորոգության խնդիրը ռուսաց կառավարության ուշադրության կենտրոնում է:

Փոխարքան հայոց պատվիրակությանն է հանձնում նաև ռուսաց կայսրին ուղղած Գևորգ Ե կաթողիկոսի խնդրագիր-հուշագրի պատասխանը, որտեղ կրկին խոսվում է տաճկահայերի խնդրին Ռուսաստանի գործնական միջամտության անհնարինության մասին: Սակայն նորից հավաստվում է, որ «Ռուսաստանը այժմյան բռայեն, ներկա պայմանները միայն աննպաստ է համարում գործնական քայլեր անելու համար, և այդ երբեք չի նշանակում թե դադարում է զբաղվել տաճկահայերի հարցով, շարունակելու է յուր դիվանագիտական ազդարարությունները...»<sup>11</sup>:

Հետագայում ևս շարունակվում են շփումները փոխարքայի և Բյուրյոյի ներկայացուցիչների միջև տաճկահայերի վիճակի բարելավման շուրջ, մասնավորապես Թիֆլիսի Ազգային Բյուրյոյի նախագահ Ս. Հարությունյանի հանդիպումները Վորոնցով-Դաշկովի հետ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այդ բանակցությունների մասին Ս. Հարությունյանի 17.02.1913 թ. և 23.02.1913 թ. թվակիր նամակները Գևորգ Ե կաթողիկոսին:

«Վեհափառ տեր, այս ռուպելիս վերադարձա պալատից, ուր կանչել էր ինձ փոխարքա կոմս Վարանցով-Դաշկովը: Մեր խոսակցության նյութը վերաբերում էր տաճկահայերի հարցին: Անհրաժեշտ են համարում զեկուցանել Ձերդ Վեհափառությանը մեր խոսակցության համառոտ բովանդակությունը:

Կոմսը հայտնեց, որ քաղաքական իրերի դրությունը այնքան խառն ու անորոշ է, որ դժվար է ասել և այն, թե ինչ կարող է անել դրական կերպով Ռուսաստանը տաճկահայերի վիճակը բարելավելու համար, միայն համոզված պետք է լինել, որ ինչպես երևում է Պետերբուրգից նոր ստացած տեղեկություններից, ռուսաց կառավարությունը տաճկահայերի վերաբերմամբ մնում է նույն նպաստավոր տրամադրության մեջ, ինչ-որ արդեն հայտնի է և կանի, ինչ որ հնարավոր կլինի:

Դեկտեմբերին իրեն ներկայացված Ձեր կողմից պատգամավորության հետ շոշափած հարցերի մասին կոմսը ինձ հանձնարարեց հաղորդել Ձերդ ս. օծությանը, որ նա այդ բոլոր հարցերի մասին իսկույն դիմել է Պետերբուրգ և ստացել է նպաստավոր պատասխան: Գլխավորը այն է, որ Ռուսաստանը տաճկահայերի հարցը համարում է իր ուժի մեջ և պետք է լուծել, խորհուրդ են տալիս, որ Ձեր պատգամավորությունը մնա արտասահմանում և շարունակի իր աշխատանքը, որը պետք է կայանա նրանում, որ կոնֆեդենցիալ և ոչ թե պաշտոնական ձևով ձգտի ստեղծել մեծ պետությունների կառավարչական շրջաններում նպաստավոր տրամադրություն, որ այդ պետությունները համաձայն են քննելու հայոց հարցը և բարենորոգումների իրագործումը համձմովի Ռուսաստանին:

<sup>7</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 87:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ 57, ց.5, գ. 28, թ. 37:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 38-43:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>11</sup> Նույն տեղում:

...Ծրագրի հարցի մասին կոմսը սասց հետևյալը. Հայոց հարցի քննության ժամանակ կարող է խոսք լինել, թե ինչ են ցանկանում իրենք՝ հայերը, ինչ բարենորոգումներ կարող են բավարարություն տալ: Այդ տեսակ դեպքի համար Կաթողիկոսը, որը ներկայացուցիչ է ու թարգման է տաճկահայերի կողմից, կարող է ունենալ մշակված ու իրագործելի ծրագիր, որի մեջ նախատեսված լինի հայերի միմիմուն և մաքսիմուն պահանջները և ցանկալի բարենորոգումները:

Եվ երբ հարկ լինի, ներկայացվի հանգամանքներին համապատասխան ծրագիր, նախագիծ...»<sup>12</sup>:

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը հատուկ Ս. Հարությունյանի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ կազմվելիք ծրագիրը նպատակահարմար է նախ ներկայացնել իրեն և իր միջոցով էլ իմանալ ռուսաց կառավարության կարծիքը:

Փոխարքան հնարավոր է համարում մահ Բալկանյան ճգնաժամի հաղթահարմանն ուղղված մեծ տերությունների վեհաժողովի շուտափույթ հրավիրումը, որի ժամանակ էլ կարելի կլինի ռուս կառավարության կողմից քննարկման առարկա դարձնել հայերի բարենորոգումների ծրագիրը<sup>13</sup>:

1913 թ. սկզբերին Թիֆլիսի Ազգային Բյուրոն, տեղի տալով փոխարքա Վորոնցով-Դաշկովի՝ տաճկահայերի բարենորոգումների ծրագիր ունենալու անհրաժեշտության հորդորներին, ձեռնամուխ է լինում դրա կազմմանը:

Սակայն շուտով Բյուրոն տեղեկանում է, որ այդ հանձնառությունը, առանց կաթողիկոսի համաձայնության և գիտության միաժամանակ ստանձնել են Կ. Պոլսի պատրիարքարանը և Փարիզում գտնվող Պողոս Նուբար Փաշան<sup>14</sup>:

Հայ հասարակական, քաղաքական կյանքում առաջնային դիրքերի ձգտող Թիֆլիսի Ազգային Բյուրոն չէր կարող ցավագին չընդունել Կ. Պոլսի պատրիարքարանի և Պողոս Նուբար փաշայի ձեռնարկումները: Այս մասին են վկայում բյուրոյի նախագահ Ս. Հարությունյանի՝ Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված հետևյալ տողերը: « ... Մեր ունեցած տեղեկություններին համաձայն Պողոս Փաշա Նուբարը ռուսաց Փարիզի դեսպան Իզվոլսկուն արդեն ներկայացրել է, թե Պոլսի պատրիարքարանի և թե Չերդ Վեհափառության պատվիրակության մշակված ծրագիրները, թեև ոչ պաշտոնապես: Լսում ենք մույնպես, որ Պոլսի պատրիարքարանը իր մշակված ծրագիրը ներկայացրել է Պոլսի ռուսաց դեսպանին, դարձյալ ոչ պաշտոնապես նրանց կարծիքն իմանալու համար:

Այս քայլերը մենք նկատում ենք վերին աստիճանի վնասակար Հայոց դատի հաջողության համար: Ծրագիրներ, որոնք վերջնական մշակության չեն ենթարկված, որոնք Չերդ Վեհափառության սանկցիան չեն ստացած, չպետք է ընկնեին դիվանագետների ձեռքը, որովհետև ներկայումս ամենից ավելի աշխուրջ վերաբերում պահանջող կետը մեր դատի գործում ծրագրի, կամ որ մույնն է, հայոց պահանջների ձևակերպումն է, որի մասին, ինչպես գիտե Չերդ Վեհափառությունը, դեռ վերջնական համաձայնության չեն եկած հայությունը ներկայացնող բոլոր մարմինները: Մենք կարծում ենք, որ թե պաշտոնապես և թե ոչ պաշտոնապես միմիայն մի ծրագիր կարելի է ներկայացնել դիվանագետներին, այն ծրագիրը, որի մասին տարաձայնություն չի լինի հայության տարբեր խավերի մեջ և որը ստացած կլինի Չերդ Վեհափառության հավանությունը: Բոլոր մնացած ծրագիրները պիտի համարվեն նախագծեր, որոնք ոչ մի քաղաքական նշանակություն չունեն:

Ի նկատի ունենալով վերոգրյալը, մենք խնդրում ենք Չերդ Վեհափառությանը, կտրուկ միջոցներ ձեռք առնել ինքնագլուխ գործողությանց առաջքն առնելու համար, և միժամանակ հասկացնել տալ, որ պետք է թե ամեն ծրագիր, որ Չերդ Վեհափառության

<sup>12</sup> Տե՛ս մույն տեղում:

<sup>13</sup> Տե՛ս մույն տեղը, թթ. 59-60:

<sup>14</sup> Կ. Պոլսի պատրիարքարանը Տաճկահայաստանի բարենորոգության ծրագիրը ներկայացրել էր Պոլսի ռուս դեսպան Գիրսին, իսկ Պողոս Նուբար Փաշան իր կազմած ծրագիրը՝ Փարիզում ռուս դեսպան Իզվոլսկուն:

ասնկցիան չի ստացած, պետք է նկատվի մասնավոր գործ, որը չի արտահայտում բովանդակ հայության պահանջը...»<sup>15</sup>:

1913 թ. փետրվարի 6-ին Բյուրոյի նախագահ Ս. Հարությունյանին հղած նամակում Բագրատ վարդապետը կաթողիկոսի անունից Բյուրոյին հանձնարարում է մանրամասն քննության արժանացնել Փարիզի և Պոլսի նախագծերը և «շուտով հայտնելու յուր կարծիքն ու դիտողությունները»<sup>16</sup>:

Նորին Վեհափառություն մաննայն հայոց կաթողիկոսի դիվանին ուղղված Բյուրոյի նախագահ Ս. Հարությունյանի նամակում ասվում է. «...Բյուրոն մեծ ուշադրությամբ ծանոթացավ հիշյալ գրությունների հետ և երկար խորհրդակցություններից հետո եկավ միաձայն հետևյալ եզրակացությանը.

Հանուն հայ ազգի մեծ պետություններին ներկայացնելիք ծրագիրը պետք է մեկ հատ լինի,

ի նկատի առնելով, որ Պոլսի պատրիարքարանի ծրագիրը արդեն ստացել է ընթացք, մատուցվել է պարոն Գիրսին, և վերջինս ուղարկել է Պետերբուրգ ռուսաց կառավարությանը, և որ այդ ծրագիրը այս փոփոխություններով և ուղղումներով հանդերձ, որ արել է պարոն Գիրսը, ըստ էության համանման է Պողոս փաշայի պատգամավորության մշակած ծրագրին, պատրիարքարանը և պատգամավորությունը պետք է գործեն այս ծրագրի սահմաններում»<sup>17</sup>:

Թիֆլիսի Բյուրոն, մանրամասն քննության առնելով երկու ծրագրերը, մշակում է մեկ ընդհանուր նախագիծ՝ հիմնական շեշտադրումը դնելով Կ. Պոլսի պատրիարքարանի կազմած նախագծի վրա և այն 1913 թ. մարտի 24-ին Ս. Հարությունյանին ուղղված կից նամակով ուղարկում է Էջմիածին՝ Բագրատ հայր սուրբին<sup>18</sup>:

Նամակում ասվում է. «Ահա ուղարկում են Ձեզ այն ծրագիրը, Տաճկահայաստանի Բարենորոգումների, որը պատրաստել է տեղիս բյուրոն: Այդ ծրագրի մեջ մտել է գլխավորապես պատրիարքարանի ծրագիրը, մասամբ Փարիզին բյուրոյի փոփոխությունները ու ինքնուրույն կետերը:

Շտապով ներկայացնում են այս օրինակը, որ ներկայացնենք Վեհափառին, որ նա վաղորդք, նույնպես և դուք Էջմիածնի գործիչներդ ծանոթանաք ու ձեր դիտողությունները անեք...:

... Բյուրոն դիտավորություն ունի իր մի քանի անդամներին ետ ուղարկել Էջմիածին ներկայանալու Վեհափառին ու խորհրդակցելու այդ ծրագրին ընթացք տալու մասին ու այլ հարցերի մասին»<sup>19</sup>:

Ազգային Բյուրոյի կողմից լրամշակված և Էջմիածին ներկայացված Անատոլիայի հայկական շրջանի բարեկարգության հիմնական սկզբունքներ – ծրագիրը բաղկացած է 13 մասից<sup>20</sup>:

Առաջին մասում սահմանվում էր հայկական շրջանի տարածքը, որը ընդգրկում էր հետևյալ վեց նահանգները (վիլայեթներ)՝ Կարինը, Վանը, Բաղեշը, Տիգրանակերտը, Խարբերդը, Սեբաստիան:

Հայկական շրջանի մեջ չեն մտնում այդ նահանգների ոչ հայաբնակ ծայրամասերը<sup>21</sup>:

Հայկական նահանգները, վարչական մի ամբողջություն կազմելով, պիտի ունենան ինքնուրույն մի ընդհանուր կառավարիչ, որին հաստատում է սուլթանը և եվրոպական այն երեք մեծ տերությունները, որոնց Բեռլինի վեհաժողովում հանձնարարվել էր իրենց

<sup>15</sup> ՀՀ ՊԿՊԱ, քք 59-62:

<sup>16</sup> Նույն տեղում, քք 41-42:

<sup>17</sup> Նույն տեղում, քք 17-18:

<sup>18</sup> Տե՛ս ՀՀ. ՊԿՊԱ, ֆ 57, ց 5. գ 56, ք 2:

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, քք 9 - 12:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը:

ընդունած որոշումների իրագործումը: Ընդհանուր կառավարիչը Շրջանի գործադիր իշխանության պետն է՝ պաշտոնավարման 5 տարի ժամկետով<sup>22</sup>: Նա բացարձակ իրավունք ունի նշանակելու և հանելու վարչական, դատական բոլոր պաշտոնյաններին: Նրան են ենթարկվում նաև Շրջանի ժանդարմերիան և հասարակական կարգի պահպանման մյուս օրգանները:

Շրջանն ունենալու է մի ընդհանուր ժողով, որը բաղկացած պետք է լինի քրիստոնյաներից և մահմեդականներից:

Շրջանային ժողովը ընտրվում է 5 տարի ժամկետով և գումարվում տարեկան մեկ անգամ ընդհանուր կառավարիչի նախագահությամբ:

Շրջանային ժողովին է վերապահվում օրենսդիր աշխատանքը:

Ներկայացված ծրագրում առանձին մասով սահմանվում էին Հայկական շրջանի վարչական բաժանումները, ընտրական իրավունքը, դատական, վարչական և այլ մարմինների պաշտոնավարության սկզբունքները: Կանոնակարգվում էին նաև դատական համակարգը, հարկերն ու տուրքերը, ազգային իրավունքները:

5-րդ մասում սահմանվում են Շրջանի վարչական բաժանումները, համաձայն որի հայկական շրջանը բաժանվում է գավառների (Մանջակ), գավառակների (Կազա), գյուղախմբերի (Նահիյե)<sup>23</sup>: Գավառները և գավառակները մույնպես պիտի ունենան ընդհանուր ժողովներ և վարչական խորհուրդներ մույնպիսի կազմով, ինչպես և Շրջանը, որոնց պարտավորությունները և իրավասությունները պետք է որոշվեն առանձին կանոններով:

Առանձնապես կարևոր է 7-րդ մասը, որտեղ ներկայացվում էին Հայկական Շրջանի «սպահովության ուժերը»<sup>24</sup>:

Հայկական շրջանի հիմնական ապահովությունը վերականգնելու և պահպանելու նպատակով պետք է կազմակերպվեն համապատասխան անվտանգության, հասարակական կարգի պահպանման ստորաբաժանումներ և գյուղական պահակախմբեր, որոնց կազմի ուղիղ կեսը պետք է բաղկացած լինի մահմեդականներից, մյուս կեսը՝ քրիստոնյաներից:

Կազմակերպված ուժերի ընդհանուր հրամանատարությունը սկզբնական շրջանում հանձնվելու էր Եվրոպացի սպաներին: Տեղում բացվելու էին նաև զինվորական և ոստիկանական դպրոցներ:

12-րդ մասում սահմանվում են Ազգային իրավունքները. յուրաքանչյուր ազգ ազատ է իր կրոնական, դպրոցական և քաղաքակրթական գործերը վարելու և տնօրինելու հարցում, անձեռնմխելի են սահմանվում հայերի ազգային և կրոնական բոլոր իրավունքները, ինչպես նաև ազգային, վանական, եկեղեցական անշարժ կալվածքները և նրանց տնօրինումը: Վարչական, դատական և այլ հիմնարկությունների գրագրությունը բացառապես տարվելու էր հայերեն՝ անհրաժեշտության դեպքում կարող էին քարգմանվել նաև այլ լեզվով:

Վերջին՝ եզրափակիչ մասում ներկայացվում են առաջարկվող ծրագրի իրականացման երաշխիքներն ու վերահսկումը: Բարենորոգչության վերոհիշյալ հիմնական սկզբունքների իրականացումը միասնաբար ստանձնելու էր եվրոպական այն պետությունը, որը առավել շատ հարմարություն կունենար<sup>25</sup>:

Եվրոպական երեք տերությունների կողմից առաջարկվում էին երեք ներկայացուցիչ - գործակալներ, որոնք հայկական շրջանի ընդհանուր Կառավարչին պետք է օգնեն շրջագայությունների ժամանակ և նրա հետ միասին հսկեն բարենորոգումների իրականացումը:

Բացի այդ՝ նախատեսվում էր մշտական գործող վերահսկիչ մի հանձնաժողով, որի նստավայրն էր լինելու Հայկական շրջանի գլխավոր քաղաքը, և որը առաքելություն

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը, ք 10:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, ք.2:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, ք 12:

կունենար հսկելու բարենորոգումների իրագործումը և միաժամանակ մշակելու մի ընդհանուր կանոնադրություն (կանոնակարգ) բարենորոգության վերոհիշյալ հիմքերի վրա: Հանձնաժողովը բաղկացած պետք է լիներ ինը անդամներից, իսկ հանձնաժողովի նախագահը ստանձնելու էր Հայկական շրջանի ընդհանուր կառավարչի պաշտոնը<sup>26</sup>: Հանձնաժողովի ինը անդամներից երեքը լինելու էին եվրոպական պետությունների երեք քաղաքացիական գործակալները, իսկ վեցը՝ տեղական ազգաբնակչության ներկայացուցիչներ, այն է՝ երեք մահմեդական՝ Բարձր դեան ներկայացմամբ, և երեք հայ՝ Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանի կողմից հինգ տարով նշանակված:

Հանձնաժողովը հանձնառություն է ունենալու բարենորոգումների իրականացման ընթացքի մասին զեկուցելու պետություններին<sup>27</sup>:

Թիֆլիսի Ազգային Բյուրոյի կողմից մշակված Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագիրը ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի ամբողջական արտացոլումն է, որը ճանապարհ էր դրոնում արևմտահայերի համար տանելի պայմաններ, անվտանգության երաշխիքներ ստեղծելու ուղղությամբ:

Թեև ծրագրում առանձին մասերով սահմանվում են Հայկական շրջանի վարչական բաժանումները, ընտրական իրավունքը, դատական, վարչական մարմինների պաշտոնավարության սկզբունքները, հարկերն ու տուրքերը, ազգային իրավունքները, այնուամենայնիվ շատ դեպքերում ակնառու են հայկական իրականությանը բնորոշ ռոմանտիզմը և զգացմունքայնությունը, բացակայում են ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական իրադարձությունների վերլուծության հիման վրա ծրագիրը կյանքի կոչելու իրատեսական հիմքերը: Ասվածը առավելապես վերաբերում է «Իրականացման երաշխիքներն ու վերահսկումը» եզրափակիչ մասին, ուր շատ անորոշ ասվում է, թե բարեկարգության վերոհիշյալ հիմնական սկզբունքների իրականացումը միասնաբար ստանձնում է եվրոպական այն պետությունը, որը «առավել շատ հարմարություն ունի»:

Այնուհանդերձ, Թիֆլիսի Ազգային Բյուրոյի կազմած Անատլիայի Հայկական Շրջանի բարեկարգության հիմնական սկզբունքներ-ծրագիրը կարելի է որոշ վերապահումներով համարել կարևոր իրողություն, թեև այն հետագայում շարունակություն չունեցավ:

**А. Р. КАРАМЯН - Программа реформ Западной Армении, разработанная Национальным бюро Тифлиса.** - Программа реформ Западной Армении, разработанная Национальным бюро Тифлиса, является отражением армянской общественно-политической мысли, искавшей пути создания условий, приемлемых для западных армян, и гарантий их безопасности.

Хотя в программе отдельными главами устанавливаются административные разграничения Армянской области, избирательное право, принципы деятельности судебных и административных органов, налоги, национальные права, тем не менее в большинстве случаев очевиден характерный для армянской действительности романтизм, отсутствуют реальные основы претворения в жизнь программы, основанной на анализе геополитических реалий того времени.

Тем не менее программу основных принципов благоустройства Армянской области Анатолии, созданную Национальным бюро Тифлиса, можно, с некоторыми издержками, считать важным событием, хотя она в дальнейшем не имела практического продолжения.

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը: